

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ



ՎԵՐՆԱԳՐԻՍ տեսողն թերեւ կարծէ՝ սխալմամբ Ռ. և Ն. տառից փոխանակ Քուսաբաւութեան գրուած Քուսաբաւութիւն. սակայն պրողին ուղածն այս էր, ընթերցողաց իմացընելու համար՝ որ իր դիտումն չէ Հայոց երկրի բուսաբերութիւնն, այսինքն երկրին ինչ տեսակ տեսակ բոյսեր ունենայն, ըստ զանազան կողմանց, լեռնային, դաշտային, ջրային, կամ ըստ տեսանելի ցեղից՝ ընդեղէն, բանջարեղէն, ծաղկեղէն, փայտեղէն, և այլն, որ և ցանկալի էր թէ հմուտ բուսագիտէ մի քննած և գրուած ըլլար. թէ և դժուար գործ է մէկ մարդու՝ երկրին ամէն կողմերը աչքով և ձեռքով քննելն. բայց դարձեալ բաւական պիտանի գործ կ'ըլլար՝ միայն հաւաքելն իսկ ինչ որ 300 տարիէ վեր բնագէտք և ճանապարհորդք՝ մասնաւոր կամ հաւելանցի տեսութեամբ և քննութեամբ նշանակեր են. ինչպէս Ժ.Պ. դարուն՝ Մատտիոլի (Mattioli), Ռաուլֆ (Rauolf) գերմանացի, Գարպըրայդ (Cartwright) անգղիացի, Ժէ-Բ դարուց մէջ Դուռնըֆոր (Tournefort), Դաւեռնիէ, Շարտէն փոանկը, Ճեմելլի իտալացի, և այլն. իսկ մեր ԺԹ դարուս մէջ շատ և ամեն ազգէ Եւրոպացիք, բայց աւելի մանր քննողք և գրողք Կարլ. Քոխ (Koch), Վակնէր Մորից (Wagner Moritz), Բառոդ (Parrot), Պուհսէ (Buhse) գերմանացիք, Տիպուա (Dubois de Montperraux), Պուասսիէ (C. Boissier) Հելուստիացիք, մասամբ և Չիհաչէֆ և Խանիքով Ռուսք, (I. Tchihatcheff, Chanykoff Nik). և ի ներկայիս Ռատտէ (Radde) գերմանացի բնակող ի Տփլիս, և այլ շատք. թէ տոնց և թէ քանի մի յոյն և լատին երեւելի հին հեղինակաց (ինչպէս Թէոփրաստ, Դիոսկորիտէս, Գալիենոս, Ստրաբոն, Պլուտարքոս, Պլինիոս, և այլն), յիշածքն ի Հայաստան, բաւեն ցուցընել, որ եթէ մեր երկիրն չունի ջերմ կլիմայից բարդաւած բոյսերը, բայց բաւական հարուստ և նշանաւոր ալ է սննդեան, դարմանոյ և բժշկական բոյսերով և ծաղկամբք և հոտաւէտ տունկերով, եւս առաւել պտղաբերօք. թողլով վայրենի ծառերը կամ զանտառս, որք անխնամութեամբ շատ պակասած են հիմայ, և երկրին մեծ մաս մի լեռկ ու մերկ թողած, մինչեւ ի մատենադրաց նախնեաց մերոց անփայտ կոշտիլ այն կողմերու՝ որոց բարդաւածութեան վրայ կը հիանային Հռովմայեցիք, Քրիստոսի թուականէն դար մի առաջ և յետոյ, իսկ չորս հինգ դար առաջ՝ յոյն հեղինակք տեսութեամբ իսկ կու վկայեն թանձրախիտ անտառաց:

Անհաւանելի և գրեթէ անհաւատալի է որ մեր հետաքնին և բանասէր նախնեաց մէջ գտուած ըլլաւ բուսագէտը և բուսաբանը ալ, և անտարակոյս պէտք է համարիլ՝ իրենց բժշկութեան հետեւող և գրող ըլլալէն. իսկ բժշկութիւն՝ մանաւանդ հին ատեն՝ առանց բուսոց ծանօթութեան չէր ըլլար, զեղեր կազմելու և պատուիրելու հարկաւ. և նոյն իսկ Յունաց և Արաբաց բժշկաբաններն՝ զոր մերոնք կարգային և թարգմանէին, անհրաժեշտ պահանջէին բուսոց և զեղոց անուններն՝ ազգային լեզուաւ աւանդել, որչափ կարելի էր. այս բանիս վկայ են մեր հին բառագրոց մէջ առանձինն գրուած բժշկական բառք. Գաղիենոսի, որոյ գրոց թարգմանութիւնն, ափսոս, որ մինչեւ հիմայ գտուած չէ, այլ միայն թէ անոր և թէ ուրիշ երևելի վարպետներու անուններն և երբեմն քանի մի խօսքերն յիշուած և ի վկայութիւն բերուած են մեր միջին դարերու բժիշկներէն, որոց՝ նաեւ արաբերէնէ և պարսկերէնէ թարգմանութիւնք գտուին՝ մասամբ, սկսեալ յ'ԺԲ դարէ:

Այս ատեն ամենէն նշանաւոր և ծանօթ մեզի գրուածովն է Մխիթար Հերացի (Պարսկահայոց հիմնական խոյ քաղքին սահմանէն), բարեկամն Ս. Ներս. Շնորհալոյ: Իր անուամբ և ժամանակաւ մերձաւոր՝ բայց արուեստով հեռաւոր՝ Մխիթար Գոշ բազմահմուտ վարդապետն ալ՝ արժանի է յիշատակի իր վայելչաբան Առականց մէջ յիշած բուսոց անուանց համար: Նոյն դարուն և հետեւեալ երկուքին մէջ (ԺԳ-Դ) մեր բանասէրք այլեւայլ նախնեաց թարգմանած գրոց մեկնութիւններ կամ լռածուանք գրած են, անոնց մէջ (ինչպէս փոխնի, Ս. Բարսղի, Նեմեսիոսի, և այլն) գտուած բուսոց և այլ բնական իրաց ալ հայերէն անունները կամ ծանօթութիւն տալով: Իսկ այս յիշեալներէս դար մ'ալ առաջ (ԺԱ) երկու Ասորի կամ Արաբ անուանի բժիշկք՝ բարեկամք և դարմանողք Գրիգորի Մագիստրոսի, Մուֆարդինեցին Էպու Սայիտ (յամի 1037) և Յախսէ կամ Յեսու, հաւանօրէն թարգմանուած են՝ գէթ մասամբ՝ ի Հայոց. ասոնք և ասոնց ժամանակակից Էպոս Սիմէ, Սիմայի որդի ըստ Հայոց, Աշիլենա ըստ Եւրոպացացոց, շատ անգամ յիշուած են ի Մխ. Հերացոյ, ուրիշ քսանէն աւելի յոյն, ասորի և արաբ բժշկաց հետ, ինչպէս նաև մեր յետագայ բժիշկներէն: Ասոնց պարագլուխ կամ ամենէն նշանաւոր և արդիւնաւորն է Ամիրտաշվաթ Ամասիացին, ԺԵ դարու երկրորդ կիսուն, որ այլեւայլ բժշկական գործեր գրելէ և թարգմանելէ զատ, այբուբենի կարգաւ ընդարձակ բժշկարան մ'ալ յորինած է հետեւելով բառագրոց իպն էլ-Պէյթար Սպանիացի-արաբացոյ (1), բացատրելով դեղոց

(1) Բժշկական բուսոց (Simples) և զեղոց վրայ արաբացի գրողաց (որոց գործն ֆուսթաթ ըլլայ) ամենէն նշանաւորն է իպն էլ-Պէյթար, այսպէս սովորաբար կոչուած, անասնաբուծի մի (Vétérinaire) որդի ըլլալուն համար, բուսաբանութեանն համար ալ էլ-Նէպաթի կամ էլ- Աշապ կոչուի. ԺԲ դարուն վերջերը ծնած է ի Մալակա Սպանիոյ (որոյ համար կոչի եւս էլ-Մալաքի), ի կէս ԺԳ դարու (1248) մեռած է ի Գումասկոս: Բայց իր հայրենեաց կողմերէն՝ Ափրիկիոյ և Սիւր զաւնաղան երկիրներ գնացեր քննել քաղեր է բոյսեր, որոց զանազան հոմանիշ ա.

և բուսոց զօրութիւնը և անուանքը, որչափ որ գտեր է, հայերէն, աւելի շատն ալ հասարակաց ծանօթ յոյն և մանաւանդ արար կամ պարսիկ և թուրք անուններով. այսպէս ըրած են և իրմէ վերջը եկողք, Ասար և Պոռնիաք Սեբաստացիք ժէ դարու մէջ: Իսկ ասոնց՝ մանաւանդ Ամիրտովլաթայ յանուանէ յիշած տասնէն աւելի Հայ բժշկաց գրուածքն՝ անյայտ են, բաց ի Մխիթ. Հերացոյ. հազիւ հաստաւոր ինչ իրենց բանից կամ փորձերն՝ յիշուին յԱմիրտովլաթայ և յայլոց: Ասոնց մէջ հնագոյնն է Յովհաննէս բժիշկ թ դարու կիսէն վերջը, որուն բժշկական գրածէն և ոչ բան կամ վկայութիւն մի կայ, այլ ամենեւին տարբեր գործ մի, Ս. Դիոնիսիոսի վարուց թարգմանութիւնն: Իրմէ նոր՝ բայց ժամանակն անյայտ՝ է Յակովբ բժիշկապետն, ամենէն ալ փափագելի. վասն զի միայն մէկ կարճ կամ քանի մի սող մնացեալ գրուածն ալ կը յայտնէ, որ արգարեւ զուտ կամ ընտիր հայերէն լեզու և բառեր՝ կրնան եղեր բացատրել՝ ինչ որ բժշկութիւն կը վարդապետէ: Նոյնպէս անյայտ ժամանակաւ, թերեւ ժ կամ ժԱ դարու մէջ գրած է և Ապղղարիպ յատկապէս Հայկազն կոչուած բժիշկն: Ոսկեղէն դարուն (Ե) թարգմանուած բժշկարանք հաւանական են, այլ թէ և ինքնագիր Հայ բժիշկք եղած են, չեմք կրնար հաստատել, բայց չեմք տարակուսիր որ ոչ միայն այն ատեն եղած են Հայ բժիշկք, այլ և աւելի առաջ և շատ հին ատեն, երբ հայերէն գիր չկար, կամ եղածն ալ անյայտացեր է:

Բայց մեր խնդիրն ոչ բժշկաց վրայ է և ոչ բժշկական լեզուի կամ գիտութեան, այլ միայն յիշեցնել, որ այդ գիտութեան հետեւող նախնիք մեր՝ քննեք ստուգեք և յետեւոց աւանդեք են՝ իրենց բնիկ լեզուի բուսական բառերը, բազմատեղով օտարաց հետ. յայտ է որ շատ անուանք ալ պարզ լեզուագիտութեամբ կամ վաճառականութեամբ և որպիսի և է յարաբերութեամբ ընդ օտարաց՝ ճանչցուած են մերայոց ինչպէս և օտարագրեաց՝ ըստ իւրաքանչիւր լեզուաց: Բայտ է եւս՝ որ ինչպէս ամեն բոյս ամեն երկրի

նուամբ 3000էն աւելի յիշէ: Այս աշխատութեան հաւասար գուցէ՝ և աւելի արդիւնաւոր է, յիշատակութեամբն յոյն, հռովմայեցի, արաբ, ասորի, քաղղէացի՝ իբր 150 հեղինակաց, յորոց վկայութիւն կու բերէ 2000 անգամէն աւելի, որք այնչափ աւելի պատուական են՝ որչափ որ այն հեղինակաց օմանց գրուածքն հիմայ անծանօթ են: Իր գիրքն անուանած է պարզաբար՝ Հաւաքումն բժշկական բուսոց (Ճնսի Էլ-Մոնֆրիտար). մեր բժշկապետ Ամիրտովլաթն ալ այսպէս Մոնֆրատար կ'անուանէ իր մէկ գրուածը, որ է Դիւղոց առանձին զօրութեանց բացատրութիւնն. կու յիշէ շատ հեղ և իր նախորինակին գործը: Ասկէ զատ Իսկ Էլ-Պէյթար գրած է նման համառօտ գիրք մ'ալ Մոնսի անուանելով, այսինքն՝ Բաւական. վասն զի կարծարէն կը բացատրէ միայն բուսոց ղեղական զօրութիւնը. որ կրնայ աւելի մեր Ամաւիացոյն Մոնֆրատարին նմանիլ: Այլեւայլ լեզուով թարգմանութիւնք եղած են բոլորական կամ մասնական Պէյթարի բառագրոց, մեր գործածածն է Լըկլէր (S. Leclerc) փառնկի թարգմանութիւնն, տպագրեալ Երեք հատոր ի Պարիզ, յամի 1876-7:

վրայ չի գտուիր, այսպէս ալ իր անունն՝ ըսել է որ օտար և հեռու երկրի բուսոց համար, կամ թարգմանելու են օտար բառերը, եթէ կրնան թարգմանուիլ, (ինչպէս օրինակի համար, Buglossum լատ. Լիսանի Սիվր արաբ, ամէնն ալ նոյն բան կը նշանակեն, կը մնայ գիտնալ՝ թէ որն է առաջինն՝ ուսկից ուրիշներն թարգմանուեր են), կամ օտար երկրի լեզուի բառերն առնուլ և գործածել. ինչպէս կ'ընեն շատ անգամ արեւմտեան ազգք, ինչպէս նաև արեւելեայք, և մերայինք ալ ըրած են և կ'ընեմք։ Դիտելու է միայն, որ երբեմն այսպիսի օտար անուանք, մանաւանդ արաբ և պարսիկ, այնպէս նման և յարմարած են մեր լեզուին, որ բնիկ հայերէն կարծուին, և հարկ է գիտնոց ստուգել և որոշել։ Դարձեալ գիտնալու է որ այսպիսի սովորական դարձած օտար բառերու ի մեր լեզուին՝ ոմանց բուն հայերէն անուանքն ալ կան. ուրեմն եթէ այսպիսեաց հանգիպիմք մեր բուսաբանութեան մէջ, հարկ է որ բուն ազգային անունը դնեմք յայբուբեան, կան կարգի և անոր զիմաց օտարամուտն, և հոմանիշ ուրիշ անունները. վասն զի կան մեր լեզուի մէջ ալ բոյսք որ զանազան անուամբ կոչուին, ո՛ր և է պատճառաւ, եթէ այլեայլ գաւառաց մէջ այլեայլ կերպով կոչուելով, եթէ բուսոյն զանազան տեսակներն ըլլալով, որ իրարու նմանեցով՝ նոյն և մի անուամբ կոչուեր են։ Եթէ մէկ լեզուի և մէկ երկրին մէջ՝ նոյն կամ նման բուսոց զանազան անուանք՝ տարակոյս կամ շփոթութիւն կու պատճառեն, ո՛րչափ աւելի դժուար կրնայ ըլլալ այլեայլ լեզուաց բուսոց բուն նոյն կամ տարբեր ըլլալը մեր լեզուին մէջ գործածուածին՝ որոշել. հասարակ կամ գործածական բուսոց անուանց վրայ չէ տարակոյսն, այլ անտառային ծառոց և ծաղկանց. և կան ալ այսպիսիք թէ օտարաց և թէ մեր մէջ, որոց ոմանք ի թարգմանչաց (նաեւ Ս. Գրոց) այս ինչ անուն տուեր կամ սեփականեր են, ոմանք ուրիշ անուն։ Նոյն իսկ Յունաց հին և ընթիւ հեղինակք, ինչպէս հիմայ ալ Էւրոպացի գիտնականք, երբեմն չեն միաբանիր բուսոց անուանց, և այլեայլ կարծիք ունին. զարմանք չէ՝ եթէ և մեր մէջ ալ, և որ և է դասկաց մէջ այսպէս ըլլայ, և պիտի ըլլայ. և թերեւս ամենուն միաբան ճանչնալու և նոյն անունը տալու համար՝ զարեւ պիտի անցնին։ Մենք՝ որովհետեւ բառազրոց ոճով պիտի գրեմք բուսոց անուանքը, հարկ է որ ամէն հոմանիշ անուններն ալ զատ զատ իրենց տեղը նշանակենք, բայց ամենէն յատուկ համարուածն աւելի բացատրեմք, և անոր խաւրեմք միաները. և նաեւ երբեմն այն տեղ նշանակեմք այն բուսոյն քանի մի օտար լեզուաց անունն ալ (նշանակելով Յ. յոյն, Ա. արաբ, Թ. թուրք, Պ. պարսիկ, Փ. փռանկ) և մանաւանդ Լ. Լատին, որ բուսաբանութեան յատուկ լեզու համարուի յԵւրոպացւոց. բայց այս՝ միայն ծանօթագոյն և ի գիրս յիշեալ բուսոց կամ մասնաւոր գիտելեաց ինչ համար։ Եւո յայտնեմք մեր տարակոյսներն ալ, և խնդրեմք ի գիտցողաց՝ պմեզ տեղեկացընել. և թէ ուրիշ բոյսեր ալ գիտեն՝ որոց անունները չեն գտնել մեր գործոյն մէջ, շնորհել մեզի, եթէ հաճին, հանգերձ բացատրութեամբ կամ նկարագրութեամբ. մենք ալ ի փութաբէն (եթէ

մեզի բաւական անուններ և ծանօթութիւններ տան), պարտական մնամք մեր գործոյն օրինակ մի տալ անոնց՝ երբ ամբողջ տպագրուի. միայն յիշեցնենմք՝ որ ստույգ և ծանօթ կամ դործածուած և լուծած անուններ ըլլան, և ոչ իրենց օրերուն կամ իրենցմէ հնարուած, ինչպէս կարծեմք մեզ խաբուած հարիւրաւոր անուններ, որոց յայն իսկ չենք կամ փափկութիւնն՝ կը յայտնէ որ նոր խելքի մէջ ցանուած և գրչի տակ բուսած են. կը թողունք զանոնք իրենց տեղը : Ընդ հակառակն հաճութեամբ պէտք է յիշեմք քանի մի նոր տեղագրաց կամ բնագրաց քիչ շատ բուսական բառից հաւաքմունքն. որպէս, տարածամ + Սրաանձ, տեանն, Նարանեանն, Արանաւեան (Երեւանեան նահանգի բուսաբերութիւնն), և այլն : Ասոց նման աւելի պակաս հաւաքմունք ալ ունիմք մեր միաբան Հարց ումանց, ինչպէս Հ. Պօղոս Մէհէրեան Մշեցի (+ 1814), Հ. Եփրեմ Սէթեան (+ 1838), որ և 30ի չափ իսկական բուսոց մասեր կամ ծաղիկներ թղթի վրայ կպուցած և աննունի գրած խաւած է. Հ. Ներսէս Սարգիսեան (+ 1866), Հ. Սիմէոն Ծովարտեան (+ 1884) : Ասոց հետ յիշեմք շնորհակալութեամբ՝ հաւաքում մ'ալ 50էն աւելի թէ բուսոց և թէ անուանց վայելուչ գրքաձեւ կողից մէջ ամփոփուած, զոր Պ. Հմայեակ Խուշպաշեան ուսուցիչ, Պ. Պետրոս Մարիմեան և այլ քանի մի բանասէր երիտասարդք Տրապիզոնեցիք՝ քաղքին քովի գեղերէն և լեռներէն ժողովելով, յամի 1890, յոքելինի առթիւ ընծայեցին առ մեր Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, և որ հաճոյ եղաւ իրեն քան զայլ յիշատակս : Նոյն քաղքէն Պր. Տիգրան Դաւարտեան ալ խաւած է ցանկ մի գաւառական անուանց բուսոց ընդ այլոց : Յիշեմք նաեւ Շեհրիսեանեան Ստեփանոսի բժշկական և բուսաբանական գրուածք և բառերը, Ռոշքեան Ստեփանոս վարդապետի Հայ և լատին մեծ բառարանն, յորում շատ բուսական բառեր ալ կան, թէ և ստուգելու կարօտ : Աւելի հաճութեամբ՝ և օգտու յիշատակաց արժանի է Դաւիթ Սալաճոյցի Սարկաւազն (Կարնոյ գեղերէն), ԺՉ կամ ԺԷ դարու գրիչ, որ հարիւրի չափ ծաղիկունք գրեթէ բոլորն հայերէն անուամբք՝ ոտանաւոր բանիւ համառօտ նկարագրեր է :

Ըսածներէս յայտնի կ'ըլլայ որ մեր հրատարակելի Հայկական Բուսաբանութիւնն ժողովուած է այսպիսի հաւաքմունքներէ, ի Բժշկարանաց, յայլ և այլ բնագիր և հին թարգմանեալ Գրոց Սլբոց և արտաքնոց, և մեր ազգային հեղինակաց. յատկապէս եւս ի Վաստակոց գրոց, որ տպագրեալ է ի վանս մեր յամի 1877, և որոյ յառաջաբանի մէջ և ի վերջը դասուած բառից մէջ՝ կան բաւական տեղեկութիւնք այն երկրագործական կամ տնտեսական գրոց հեղինակաց և թարգմանութեան վրայ, զոր համարեր եմք ԺԳ դարուն եղած յարաբ լեզուէ ի Կիլիկիա, թէ և ըստ կարգաբանութեանն համանման է Կոստանդին Պերփիլոսովեան կայսեր հաւաքել տուած Երկրագործականին (Geoponicon) : — Աւելցնեմք հօս շատ հետաքննական և պանծալի բան մ'ալ. այն մեր հրատարակեալ գրոց յառաջաբանին մէջ յիշած էինք իպն—ալ Ավամ սպանիացի արաբացոյն Մշակական գիրքը (Գիթմապ—

ալ—Ֆէլլահ), ժի գարու մէջ գրող, որ իրմէ առաջ Ուաշիտահ կամ Վահ-
շիահի հաւաքողին գործը հարկաւոր անգամ յիշէ և վկայութիւն բերէ. այս
գործն շատ հաշակաւոր գրութեա՞ք է, և կոչուի Երկրագործութեան Նաբաթացոց
(Agriculture Nabathéene), յանուն Նաբէոլթի որդւոյ Խամայէի որդւոյն
Արբահամ՝ նահապետի, յորմէ Արաբացիք սերուած են, և իրենց ընդարձակ
երկրին հիւսիսակողմը բնակող ժողովրդէն համարուի՝ ամենէն առաջ երկրա-
գործութեան վրայօք գրուած, քաղզէարէն կամ արաբերէն, հին Բաբելոնացոց
ինքնակալութեան ատեն. գիտնականք համարին թէ ոչ մէկ այլ քանի մի
հեղինակաց գործ ի մի հաւաքուած եղած է այն Նաբաթական Երկրագոր-
ծութեան պիքն, ըստ ոմանց Նաբուքոդոնոսորի ժամանակ. հաւաքողն ալ
Քոռցամի անուամբ մէկն, իսկ Վահիտահ ժԱ գարու սկիզբները անկէ քաղեր
և թարգմաններ է արաբերէն, ինն մաս բաժնած. ամբողջ գործն հազուադիւր
է կամ անգիւտ, և դեռ չէ թարգմանուած յԵւրոպացոց, որք շատ բան գրած
են անոր նկատմամբ. և ծանուցանեն որ Վահիտահ այն հին և հնազոյն հե-
ղինակաց մէջ երեք գլխաւոր յիշէ. առաջինն Սագրիտ ռիթ (Sagrit) կամ
Տագրիտ (Daghit), վերջինն Տամիրի կամ Յամիրի (Tamiri, Jamitri)
Քանանացի. իսկ միջինն ժամանակաւ՝ Հայ մի, Յամբոշադ անուամբ (Jam-
buschad), յոմանց գրուած նաեւ Jambusckad, որուն գրութեանքն ալ
թարգմանաբար կ'ընծայէ Վահիտահ, անկէջ ալ յիշէ Խայն ալ—Ալլամ, մասնա-
ւորապէս Ալլահգործութեան մասին: Անունն հաւանօրէն այլայլած է, բայց
դարձեալ հայկական ձայն կու տայ ակընջի, իբրեւ Համբոշադ կամ Համ-
բոշադ. (որ կու յիշեցընէ Ասկիւպիտի զտերն անունը և դեղը, Panacée,
Համբարյժ, ամենաբոյժ դեղ): Բայց անունէն աւելի գործն կամ գրածն է
մեծ յիշատակաց արժանի. միանգամայն և հաւաստիք (թէ և ասոր կարօտ
չէինք) Հայոց մէջ շատ հնուց և միշտ՝ երկրագործութեան քարգաւաճ ըլլալուն.
որոյ՝ այսօրուան օրս ալ կենդանի վկայ են թէ մշակութեան թէ հովուութեան
արուեստից վերաբերեալ բազմաթիւ մանրամասն գործածուած բառք և բացա-
ւորութիւնքն. յորոց զուշակուի, որ եթէ ոչ անոնց չափ շատ՝ բայց ոչ ալ քիչ
բուսական բառք պիտի լսուէին իրենց լեզուաւ: — Ասոնց մնացորդքն կամ
մնացորդաց մնացորդ համարուին մեր քաղածքն ալ. որոցմէ զառ անշուշտ պիտի
ըլլան գեւ շատ բառք կամ անուանք բուսոց՝ որ մեզի անծանօթ են, կամ մեր
յիշողութեանն և աչքէն լրիւպեր, ինչպէս նաեւ մեր բուսաբանական գիտութե-
անն, ուր որ հարկ ըլլայ, քիչ անգամ, բուսոց կամ իրենց տեղւոյն բնութեան և
կազմութեան վրայօք տեղեկութիւն տալ. բայց յուսամք որ գիտցողք ներդաւիտ
ըլլան մեզի, և այլք լաւագոյն և առաւելագոյն կերպով յայտնեն և կատարելա-
գործեն մեր նախնեմայն: Այսպէս ալ շատ անգամ Ամիրտոլլաթայ գրածները
ի մէջ իւր բերեմք, ոչ իբրեւ կատարեալ բուսաբանի տեղեկութիւն, այլ իբրեւ
ազգային աւանդութիւն և հանդ ազգայնոց, թէ անոր տուած ծանօթութեամբք,
թէ պարզ և ընտանի ոճով և լեզուով, և թէ միանգամայն իբրեւ գիտուն բանա-
սիրի և արժանաւոր հեղինակի, և նշանաւոր ազգայնոյ մի գործ, որ Եւրո-
պացի գիտնականաց անգամ կ'ընթաց ցովելի և պիտանի ըլլալ:

Այստեղ նկատմամբ կ'արժէ որ լսենք ինչ որ ինքն կ'ընէ ի յառաջարանի բժշկական Բառագրոցն. « Հիմի պատեհ է որ ասեմք քանի մի բան վասն »
 « Դեղերուն, անարժան և անպիտան ծառայ Ամիրտուլաթ բժիշկա Ամա- »
 « սիացի: Յիմացէք և հասկացէք, եղբայրք, որ այս զրքիս ձեռն այսպէս »
 « է. որ զմէկ դեղի մի անուն՝ շատ բառերով է գրած ի վերայ այբուբե- »
 « նի. (ինչպէս) Արխադրն Յ. (արաբերէն) բառով՝ ի վերայ Ալբին է. և »
 « Հայ (բառով) վաղմեռուկ ասեն, յիշած է ի վերայ վէլին. հանց որ »
 « Աալասսան (Alyssum) Յ. (արաբ.) և Հ(այ) վառվռուկ ասեն, յիշած է »
 « ի վերայ վէլին: Եւ լինի որ ասեն զանունն ի մէկ գրի վերայ, և »
 « մէկ գրի վրայ այլ զպատմութիւն պատմեն և զգառութիւնն ասեն՝ թէ ի՞նչ »
 « է. որպէս, յիշած է Ալլասսան ի վերայ Ալբին, և ի վերայ Չային՝ Չան, »
 « և Գլիր պատմութիւնն: Եւ կայ դեղ որ հինգ վից անուն ունի, և ամէն »
 « անուանքն յիշած է ի վերայ գրին, թէ գինչ գիր որ ի յառաջն գայ. և ի »
 « մէկ անուանն վերայ յիշած է զքնութիւն և զգառութիւնն, և զկարողու- »
 « թիւնն, թէ որպէս է: Եւ Չարխոսն որ յիշած է ի վերայ Չային, և »
 « մէկ այլ անունն Փարսի Եաշանն է որ կու յիշուի ի վերայ Փիրին, և »
 « մէկ այլ անունն Քոնզպարաբ-ըլպերն (Քոսպերէթ էլ-պիր) է, ի վերայ »
 « Գէին, և մէկ այլ անունն Շէր ըլ-խնգիրն է, և մէկ այլ անունն Թ. »
 « (Թուրքաբէն) Պալտրիի զարա ասեն: Եւ շատ անուանք ունին այս դե- »
 « ղերս. բայց զպատմութիւնն ի մէկ անուան վերայ կ'աւարտեմք. և զայլ »
 « պազի (քանի մի) անուանքն զամէն մէկն յիշ գրին վերայ կու յիշենք. »
 « որպէս, Պապուսնամ որ յիշուի ի վերայ Պէին, և այլ ասեն իրիցոսկ՝ »
 « յիշուի ի վերայ Ինիին, և այլ ասեն Գետնի ինճոր, որ յիշուի ի վերայ »
 « Գիւին. Բայց զամէն անուանքն կու գտնուն Ալբէն իվեր, և կու գրենք, »
 « և ի մէկ անունն զպատմութիւնն կու յիշեմք: Եւ այս ձեռնով կու ըն- »
 « թանայ այս գիրքս... Եւ թէ Աստուած յաշողէ՝ զորոցս ի վերջն յիշեմ »
 « մէկ ազէկ Բազիրբն, որ գինչ որ գժոր բառ կայ՝ հայ լեզուաւ պատմէ. »
 « որ թէ կարգացողն դիւրութեամբ հասկանայ, և (թէ) ուսանողն դիւրաւ ուսանի, »
 « և իսկի ծածուկ իրք շմնայ, և յայտնի »: — Թէ և կայ Ամիրտուլաթի »
 « գործոց մէջ բառարան մի հինգ լեզուաւ (հայ, արաբ, պարսիկ, թուրք, »
 « հռոմ), դեղոց, բուսոց, և այլն, բայց համառօտ բան է, և ոչ կարծեմ այն »
 « խոտաւցեալ բառգիրքն: — Այս ըսածէն առաջ ալ կ'իմացընէր, թէ « Չայս »
 « գիրքս շինեցաք և ստուգեցաք շատ բառերով և պատմութիւններով (ի թիւին »
 « Հայոց Շիմէ, այսինքն Շ, 500 + Ի, 20 + Ն, 400 + Է, 7 = 927, »
 « որ է 1478 Քրիստոսի, և որ կարգայ հեշտութեամբ յիմանայ, և ան- »
 « գէտն չի յօգալի ի սմանէ. և անուանեցաք զայս զրոցս անունն Անգիտաց »
 « անպէտ. և պարտական եմ գիտնականացն և ծառայ ամենայն Փրիստօպիցն: »

« Եղիր հետեւող իմաստութեան հետ.

Եթէ չուսանիս՝ բժիշկ ես անգէտ.

Լինիս զու գիտուն, արա բանիս պէտ.

Գրոցս անունն է Անգէտի անպէտ »:

Այս թուականէն տասն տարի առաջ (1468), Ամիրտուլաթ գրեր և նոյն տարւոյն դեկտեմբերի 25ին աւարտեր է բաւ բժշկական գիրքը, յայտնի թժկաբան անուանելով. զարձեալ ուրիշ նման գրուած մ'ալ, Օգոստ թժըշկութեան կոչուած, « որ Տաճիկն Գիթայէթի տիպ ասէ. և արարի զայս » գիրքս երկու բաժին. առաջին բաժինն է Ուսումն բժշկութեան և թապիր » (եղանակ) առողջութեան, և Ստածումն (խնամ, դարման) ամենայն ան- » ձինն. և երկրորդ բաժինն յիշէ զԵրակուրն և զԴեղերն նորա ամէն մէ- » կէն և խառնուածէն, և զհումութիւնն և զօգտութիւնն և զօրութիւնն, և » զչափն առնելուն և զփոխանն ամէն մէկի. համառօտ ժողովեցի, և զբեցի » զհին և զնոր բժշկապետացն զխօսքն, որ զամէն մէկին անունն յիւ տեղն » պիտի յիշեմք. և արարաք զայս ի վերայ այրութեանից կարգաւ. յառաջն ի » վերն զցաւուն անունն է գրած, և ի ներքեւն զպատճառն, և այլ ի ներ- » քեւն՝ զցաւուն նշանքն, և այլ ներքեւն զստածումն է գրած », և այլն : — Քանի մի տարի վերջը (1481) մեր անխոյն փիլիսոփայ բժշկապետն գրեր է Աքրապատիւնը, որ է Դեղագուլութիւն, զեղերու շինելու և խառնելու կերպը (Formulaire, Pharmacopée). և որովհետեւ « Աքրապատիւն ա- » ռանց Մոշփրատարի (les Simples) յիշնար, որ է՝ մէկ մէկ զեղերն, (այսինքն իւրաքանչիւր բուսոց և զեղոց յատկութիւնն կամ զօրութիւնն), նա » շինեցի զՍարապարիւն (Աքրապատիւն) լման, և զՄոֆրատարիւն այլ ի լման. » և զանուանքն զրի ի կարգին հինգ շեղուով », և այլն : Այս գործս աւարտեր է Ամիրտուլաթ ի Է. Պօլիս. յիշեալ տարւոյ « ապրիլ ամսոյ ի վեցն, ի ասին Աւետման Սրբուհոյ Աստուածածնին » : — Նախընթաց տարին (1480) ի նոյն մայրաքաղաքն էր, երբ խնդիր եղաւ Մատենեար կաշին (Հայկա, կամ ասոր մէկ տեսակն), և թագաւորական հրամանաւ « զրիեցաք, կ'ըսէ, երեք մարդ » ի Լիմնոս կղզի, և հարցընելով ծեր մարդիկ՝ գտեր, փորեր ու բերեր են առ թագաւորն, որ « այս կաւէս շինել երէւտ շատ փարչեր, » որ զլուրն խմէին, և զայլնն ետ ի խազինան » : — Նոյն տարին ուրիշ յիշատակ մ'ալ թողեր է Ամիրտուլաթ, որով լաւ եւս կ'իմացընէ իր բանա- » սէր ըլլալն, որոյ վկայէ և ընդօրինակողն զրոց Միխայէլ Ասորոյ պատրի- » արքի Պատմութեանց. « Զոր տեսեալ զսա հետեւողն իմաստութեանց և սի- » ռողն սուրբ գրոց՝ մեծահասաւ թարգմանող թժիշկ Ամիրտուլաթն, և ետ » զսա գրել ի վայելումն անձին իւրոյ և զեղուղէշ նորահաւ զաւակին իւրոյ » Ամիրտուլաթին » :

Այսչափս մեր գործոյս համար բաւական ըլլայ ի ծանօթութիւն Ամիր- » տուլաթայ, որոյ վրայօք արդէն գրուած է ուրիշներէ ալ, այլ կ'արժէ աւելի քննութեամբ ճանչնալ և ճանչցընել զնա, իբրեւ մեր զրագիտաց, եւս առա- » վել իրեն ժամանակին, հանճարեղ նշանաւորներէն մէկն. որոյ վախճանն ալ նշանակուի իր գրոց օրինակաց մէջ. « Փոխեցաւ ի Քրիստոս Ամիրտուլաթն » թժիշկն թարգմանող գրոցս ի թագաւորական բժշկարանէ. ի թուին Զիտէ, » (1497) գեկտ. ամսոյն ի ութ, և տարն հինգշաբթի » : — Ուրոյ հանգիստ

և փառք մնալթելով՝ սկսինք մեր գործը, ի նոյն Ամիրտովլաթայ Անգիտաց ան-
պէտ բառագրոց առաջին բառով (Աադուսան), զոր պէտք էր դուրս թողուլ անոր
նման շատ օտար բառերով, որ կամ հայերէն նոյնանիշն ունին, կամ ոչ
անուամբ և ոչ էութեամբ ծանօթ են Հայոց: Բայց կ'ընդունինք այն օտար
անունները՝ որոց ծագումն յայտնի կամ անյայտ են մեզ, և կարծեմք թէ
լսուած և թերեւս գործածուած ալ ըլլան ի Հայս, և նշանակեմք աստղով մի (*),
զուտ հայկական կամ հայացեալ անուններէն որոշելու համար:

1. * Ալլուսան կամ Ալալուսան.

Ամիրտովլաթայ բառագրոց առաջին բառն է, նոյնպէս և Իպն Պէյթարի ուս-
կից առած է. իսկ սա ի յունականէն Ալիսսա, կամ ի լատինէն *Alvesson*, որ է
ուսումնական անունն, փռանկերէն ալ *Alvesson*. Ինչ տեսակ բոյս ըլլալը պիտի
իմացնէ (երբ այբբենից կարգն հասնի) հայերէն շնորհաւոր անունն Վասվաուկ,
որոյ համանիշ է անշնորհք անուն մ'ալ, իշաքնդ:

2. * Աբարբին.

Այս ալ օտար և խանգար անուն է, աւելի լաւ գրուած է Ափարբին, որոյ
կարգին նշանակենք ինչ ըլլալը:

3. Աքեղախոտ.

Վայելուլ կամ խորհրդաւոր հայ անուն մի, որոյ թարգմանութիւն է Թուր-
քարէն անունն ալ, Գարապաշ կամ Քէշիշ օրի. բայց գաւառային կամ ռամկա-
կան բառ է. բուն հայերէն անունը բժշկարանք կ'աւանդեն Էզնախոտ կամ
Էզնախոտ, զոր գտնես ի կարգին: Աւելցրենք այս տեղ՝ որ նոյն բժշկարանք օտար
և խանգար բառով մ'ալ կը յիշեն այս բոյսս, Աստիստոս կամ Աստախոտոս:

4. Ագարակի խոտ.

Ի գիրս յիշուած չէ, բայց ի նոր գրողէ, որ համարի գրոց Բաշիս կոչածը.
(տես ի Բ.) սա արաբերէն կոյի Ակիր, Ակար, և լատինն *Acorus*, փ. *Acorus*.
արեօք այս անուններն են Ագարակ փոխուած թէ յԱգարակէ:

5. Ագռակի Թուր.

Ի գիրս չեմ հանդիպած. բայց արաբերէնի թարգմանութեամբ յիշուի յԱմիր-
տովլաթ, Սէյֆ է-դորասպ. այս ալ ըստ յունական Քսիֆիոն բառէն, որ նոյնպէս
Թուր կը նշանակէ, ինչպէս և լատին անունն *Gladious*, ռուսկից փռանկն *Glaive*.
Ամիրտովլաթ ուրիշ արաբացի անուններ ալ յիշէ, ինչպէս Տուրխուշ, փոխանակ
գրելու Տուրխուշի Երօշտ և կ'ըսէ ըստ Պէյթարի, « Ինքն ի վայրի Սուսանին
» ազգէն է, որ Հելլենացիքն Քասիստոն (Քասիֆիոն) կ'աւան. և ինքն Տահփաստն

է ու — Իսպն Պէյթար ալ ուրիշ անուններով կը ստորագրէ ինչպէս, Տալապոթ, ٭٭٭ ٭
 Նաֆոնա, զոր յիշէ և Ամիրտովաթ, նոր անուն մ'ալ աւելցընելով, Նաֆոնա, որ
 է Տիլեռա. և այս օտարոտի անունն տակ կը ստորագրէ. « Ինքն կարմիր Առաքանն
 » է, որ Թուրքն Քաջիկ չիկտամի, և «մանք ի Թուրքացն Ղուզղուն ղլիմի (") սանն,
 » և տերեւն ի Թուր կու նմանի. և միւրդ ունի ի բոլորն. և մէկ կանգուն ի գետնէն
 » ի վեր կու ելանէ. և երկու տակ ունի՝ մէկն ի վերայ մէկին հիծած. մանր սոխ
 » կու նմանի, և ներքեւինն Թուրմած և վերեւինն ի լի կու լինի և գէր. և թէ զան
 » վերի տակն գինով և խնկով սպեղանի առնես և յանձն օծես՝ օգտէ հերքունին ».
 (Թուրք. Թեմարէկի հիւանդութիւն իբրեւ բորոտութիւն):

6. Ագռաւի ճաղիկ.

Ի գիրս չեմ հանգիպած, այլ ի նոր բառագիրս. Նրային եղէգի տեսակ է, որպէս
 կ'ընին:

7. Ագռաւի ճանկ կամ Ագռաւի ոտք.

Բոշկարանք ոմանք համառօտ կ'ընեն, « Խոտ է, երեք տերեւ ունի, միջինն երկան
 և քովինն կարն » — « Մայիսն կը բուսնի այս խոտս. դեղին ծաղիկ ունի »: Իսկ
 Ամիրտովաթ ի կարգին յիշելով այս երկու համանիշ անունները, որ է Ըսիմի իւ-Ղու
 բապ, մեկնութիւնը կու տայ Ատրիլա կամ Աստրիլա անուան տակ, որ է թրիլալ
 կամ Աստրիլալ ٭٭٭ ٭ Ըստ Պէյթարի. « Թուրքն խիշ ասէ, բայց չէ ստոյգ, և
 » Ղուզղուն աշաղի կ'ասեն. և ինքն ամենայն դիմաք ի Սամիթ կու նմանի. բայց ծա-
 » ղիկն սպիտակ է: Եւ այլ կու սանն, թէ հունդն նման է կարոսի հընդին, և խիստ
 » լեղի է, և կապուտօյն, և կայ որ կանաչ քիշ մի մեծ կակ է. այն է Այստրիլալի
 » դալսն. և այն որ կապուտն է՝ Այստրիլալի Մըսրին է (Եգիպտական). և Ըսիմ
 » իլ զուրապ կու սանն, որ է հոյերէն Ագռաւու ճանկ, և Ճուզվի շէյխուսն (ալ)
 » կ'ասեն ». փոխանակ գրելոյ ճէգրի շէյխուսն Ըստ Պէյթարայ, որ նշանակէ Սատանի
 » Ստեպղին (Թ. Հափուհ): — Դարձեալ գրէ. « Ագռաւի ոտք. ի գետնէն ի վեր մէկ
 » թիզ կ'ընէ, և երեք երեք տերեւ ունի. նման է Կոտման տերեւին. այն տերեւն
 » որ ի մէջն՝ երկընկէս է քան զերկուքն, և երկու քովին կարծ լինի. նման է ագ-
 » ռաւի ոտայ »: Պէյթար զանազան է իր Ագթ/րլալ կոչածը, (զոր Թարգմանիչն
 փռանկ *Ptychotis verticillata* անուանէ ի յատինն), բուն Ագռաւիճանկէն (Ռիմիլ
 իւ-ղուրապ), զոր կոչէ ի լատինն *Lotus Ornithopodioides*.

8. Ագազու.

Պալէստինայի քառից հաւաքման մէջ գրուած է. « Կարթագէ՝ Ագազուն ». Ստե-
 փանոս Ռոյքեան իր Հայ-Ղատին բառագրոց մէջ կ'ըսէ. « Արմատ բոշկական
 » փոքր և նօսր, նման ոտոց կիւսամոնի », և դարձեալ, « Է խոտ թիւնաւոր. Car-

* Ղազըւն՝ արծուի անասկ բարձր թռչող հաւ մ'է, կայերէն Ուրիւ-Լ կոչուածն անա-
 բուի: Ամիրտովաթ այս անունը կը յիշէ Արաբաց Նոսր քառին տակ. « Որ Թուրքն կոչու-
 » (Քերէքէ) կ'ասէ, և Հայն Ոսկրկու. և այսոր պատմութիւն մէկն այն է, որ քան զայս բարձր
 » թռչողը ձագ չկայ. և մէկ օրն յարեւելից մինչև յարեւմուտս երթայ և դարձեալ կու դառնայ.
 » և այլ որ զամանաւի իմն այս է, որ քանի ի հետու տեղ մեռածի միտ ուտէ, նոս այն օրն
 » պիտի որ երթայ դիւ բունն (բոյն), և դիւ ձագն գտնուի »:

posia ». ուղիղն Carposium. փառնկերէն ալ Շարբésie, 'ի յունականէն Καρπύσιον. Պէյթար ալ կու գրէ Գարֆիւմիոն, բայց բուն արաբացի փէպպայ բառով կու բացատրէ. « զոր պէտք չէ շիթթէլ ընդ Քապպապայ (որ և Հապպէլ-արուս), զոր կու յիշէ Ամիրսովլաթ ալ. « Քապպապ » որ է Հապ ըլ յարուս » գրեւով. բայց առաջինը չի յիշեր :

9. Ազատ.

Այսպէս կոչուած է նոր գրուածի մի մէջ Բրաբիոն ծաղիկն. տես զայս :

10. * Ազատդրախտ.

Յայտ է ձայնէն որ Պարսից լեզուով է Ազատ տիրէիթ, և մեծ ծառ նշանակէ. նոյն անունն ընդունած է և ռուսումնական լեզուն կամ Նարոպացիք, Melia Aziderach. այս անուամբ կու ստորագրէ և Ամիրսովլաթ ըստ Պէյթարաց. « Ինքն մէկ մեծ » ծառ է, միրգ ունի որ ի կաղին կու նմանի... լաւն այն է որ յածուենիքն բուս. » նի: Իպն (Պէյթար) ասէ թէ իր ծառն նման է Ալունին ծառին, և միրգն ալ ի » ալունու կու նմանի. բայց ի մրգէն մի՛ ուտեր, փնասակար է, կու սպաննէ. և թէ » զծաղիկն հոտորաս՝ զըղեղան կալուածն բանայ... Մէնհանին (1) տէրն ասեր » է. թէ Սպաննող է. և մեք փորձեցաք որ չէ հանցաւն, և իր պտուղն քիչ մի » քաղցրութիւն ունի. և Մինհանին տէրն ասէ՝ թէ խիստ լեղի է. և չէ այսպէս : » Եւ իր տերեւն զմազն կու երկընցընէ, թէ զգլուխն իրմով լլանաս ու : — Այս երկու վկայութեանց հակասութիւնը թողլով նոր փորձողաց ստուգել, յիշէք որ մեր բժշկապետն այս ծառին այլեւայլ արեւելեայ անուններն ալ յիշէ. որոցմէ դաս յԱսորիս ալ Ճիքուտ կոչուի: Բայց մեզի ամենէն կարեւորն է մեր իրմէ վերջի բժշկականութիւն՝ Ասորայ՝ յայտնածը, թէ Խորենացոյ Աշխարհագրութեան մէջ Արտաբոյ բուսոց կարգը դրուածն իրաքանի այս Ազատտիրախտ ծառն է. ինքն ինչպէ՞ս ստուգեր է արդեօք : — Փռանկը կ'անուանեն բաց յուսումնականէն նսեւ Artre saint. Artre à Chapelet. ըստ այսմ և Թուրքը (ըստ Պալատցի Տէրացու Քէտրգայ Տէր Բովհանի սեան) Թեպպիհ աղածի :

11. Ազատքեղ.

Վայրի էարուն է, ինչպէս լատին անունն ալ նշանակէ Petroselinum, (Քարերու Կարոս) յորմէ փռանկն ալ Persil. Թ. Մադսանու. Ռ. Нерпышка. Պէյթար լատին կամ յոյն բառն ալ տառադարձութեամբ գրեր է Պիքրասէլինոն. այսպէս և մերս Ամիրսովլաթ՝ աւելի ծանօթ « Պիտրոսէլինոյ, որ է Ֆատրաստիոն » : այս անուան տակ գրէ. « Ֆատրաստիոն, և ինքն է վայրի Քարաւիզն. և լաւն այն է որ հունտն » սեւ լինի և պինտ լինի և խոլոր լինի... և թէ զինքն շատ ծամեն՝ զՍորին և » զԱստորին հոտն կու կորէ... և իր հոտն սգտէ ամենայն մահացու գեղոց ու :

12. * Ազարիի.

Ըստ Պլինիոս. « Ինքն խոտի տակ է, որ ազաւան ուտէ՝ խեւնայ. աղէկն նորն պի. » տի... Ասէ Սահակն, թէ ինքն Թմրադեղ է » : — Սահակն անուանի բժիշկ է Հրեայ, Իսրայելացի մականուանեալ, ծն. յամի 845. շ 100 ամեայ :

(1) Իպն Ճէլուս Պաղատացի գիտուն բժիշկն ԺԱ գարու, մարպուս անդէտն նարկուտ և զեւ զոց բառադէրք որ լինած է Մեհմեդ կոչելով. Ամիրսովլաթ շատ տեղաւմ կու յիշէ զայս, Մինհան տէրն կամ զորոք անուանելով :

13. * Ազարիոն.

Ըստ Ամիրտովաթայ, « Ինքն Ախաւանին ցեղերուն է (տես զայս անուն), և
 » ժաղիկն ի ոսկու գոյն կու նմանի, և ի ածփենիքն կու լինի, և ի լերունքն այլ կու
 » լինի. լաւն այն է որ լերունքն լինի... Պատէհին (1) ասէ, թէ պարսկերէն Ազա-
 » բոն կ'ասեն, և Արտամ այլ կու ասեն, և ի շատ խօսքն Սահրայ Ճամէյին (2) է,
 » որ ասէ, թէ Ախաւանին ցեղերուն է, և Կուշի Ախաւան կու ասեն, դեղին կու
 » լինի և կարմիր կու լինի. և այս չէ ստուգ. Ախաւանին ժաղիկն դեղին և սպի-
 » տակ կու լինայ. Եւ առցած է թէ իր բուսն մէկ կանգուն կու լինայ. և զրոցս չի-
 » նողն ասեր է, թէ Բուսն Ախաւանին մէկ կանգուն կու լինի, բայց Ազարիոնին
 » բուսն մէկ կանգուն և մէկ թիզ այլ կու լինի. և տերեւն Ախաւանին տերեւին
 » կու նմանի ստուգ. բայց ժաղիկն խիստ կարմիր, որպէս կրակին գունովն, և
 » ժաղիկն մէջն սեւ կու լինի գունն. և Ախաւանին ժաղիկն ի սորա ծաղկէն փոքր
 » կու լինի, բայց Ախաւանին ժաղիկն մէջն դեղին և եղբրքն զետ երակներ սպի-
 » տակ է. և Ազարիոնին եղբի երակներն կարմիր է, և մէջն սեւ է. Այս ցեղիս
 » Շախայիդ (Շէգայիզ, شق) կ'ասեն և կու ստուգեն. Եւ ասեր է զրոցս չի-
 » նողն (3), պարսկերէն Ազարիոն (Ագէրկիւն ازگرن) կու ասեն, որ Թարգմանի
 » կրակին գունովն — Այլքան բացատրութենէն զատ Ամիրտովաթ կու գրէ, թէ
 » Իպն (Պէյթար) ասէ, թէ « Իրենն (Ազարիոնի) Եղին այչ ասեն, որ է Այն ըլ-Պա-
 » խարն », և այլն. և կու նկարագրէ այս բոյսս, որ տարբեր է յԱզարիոնէ, և Պէյթար
 » ալ որոշ և զատ գրէ Պենար անուն տակ Եզինաչքին նկարագրութիւնը, ուր մենք
 » ալ պիտի յիշմբ: Իսկ այս Ազարիոն կամ Ազարիան (եթէ ստուգ է անունս) յիշուած
 » է ի Պէյթարայ, և կըրնար կարծուիլ թէ մեր հեղինակն չիօթէ ընդ Ասարունի
 » (Asarum), բայց զայս ալ առանձին կու ստորագրէ և հայերէն Մրուանտակ կոչուիլը
 » կ'իմացընէ, որ թէ ոչ տարբեր ցեղէ՝ այլ տարբեր տեսակ բոյս է:

14. Ազոխ.

Յայտնի է այսպէս կոչուիլ տհաս խաղողին. որոյ նմանութեամբ իմն կոչուի և

15 Ազոխ վայրի.

« Որ է ըստ Ամիրտ. Հայիաշամն, որ է Մ'էշպահարն ». սա պարսկերէն է
 » زایشامه, և նշանակէ մշտադալար, Sempervivum. այս լատին անունամբ յատուկ
 » բոյան՝ ըստ մեզ է Գառնադամկիկն. իսկ Միշպահարն՝ զոր Ամիրտ կոչէ և Հալ-
 » յաշը, է Telephium կոչուածն ի Դիոսկորիտիայ, ըստ բուսաբանից, զոր մեր հե-
 » ղինակն ալ յիշէ, կոչելով « Տիլաֆիոն. Ինքն ի Հայիաշամին ցեղերուն յիշած է,
 » և Գալիանոս ասէ, թէ քնութիւնն տալ է », և այլն. Պէյթար կ'իմացընէ որ
 » ոմանք այս բոյսը կ'անուանեն նաեւ Անմեռուկ վայրի:

1. Թերեւս Իպն Պաշթուի բժիշկ յառաջին կէս ԺԱ դարու:

2. Մեզ անծանօթ հեղինակ:

3. Շատ նշ. այսպէս կ'ըսէ Ամիրտովաթ, և ինքն իսկ կարծուի դրոշն. բայց երբեմն օտար
 » հեղինակ՝ ուսկից Թարգմաներ է: